ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

2009 թվականի նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների, որոնց կատարման դեպքում ապրանքը համարվում է ծագած այն երկրից, որտեղ դրանք տեղի են ունեցել, ցանկում (Ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների 1-ին հավելված, որը հանդիսանում է Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրի բաղկացուցիչ մասը) ներառել հետևյալ փոփոխությունները.

1. ԱՏԳ ԱԱ «1501 00-ից» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1501-ից	Ոսկրային յուղ կամ յուղ՝ մնացորդներից ստացված	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից՝ բացի 0203, 0206 կամ 0207 կամ 0506 դիրքերի նյութերից, պատրաստում 0203 կամ 0206 դիրքերի խոզի մսից կամ մսամթերքից կամ 0207 դիրքի թռչնի մսից կամ մսամթերքից

2. ԱՏԳ ԱԱ «1502 00-ից» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1502-ից	Ոսկրային յուղ կամ յուղ՝ մնացորդներից ստացված	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից՝ բացի 0201, 0202, 0204 կամ 0206 կամ 0506 դիրքերի նյութերից

3. ԱՏԳ ԱԱ «2403 10» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2403 11 000, 2403 19	Ծխախոտ՝ ցանկացած տեսակարար կշռով ծխախոտի փոխարինիչներ պարունակող կամ չպարունակող	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն 2403 ապրանքային դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը

4. ԱՏԳ ԱԱ «2932 99 700» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2932 99 000-ից	Այլ պարբերական ացետալներ և ներքին կիսաացետալներ, որոնք պարունակում են կամ չեն պարունակում թթվածին պարունակող ֆունկցիոնալ այլ խումբ և իրենց հալոգենացված,	Պատրաստում ցանկացած դիրքի նյութից, այդ թվում՝ 2932 դիրքի այլ նյութերից

	սուլֆացված, նիտրացված և նիտրոնացված ածանցյալներ	

5. ԱՏԳ ԱԱ «2932 99 850» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2932 99 000-ից	Ներքին պարզ եթերներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 2909 դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը

6. ԱՏԳ ԱԱ «3920 10 270» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3920 10 250-ից	Թաղանթ, շերտեր կամ ժապավեն՝ 0,125 մմ-ից ոչ ավելի հաստությամբ՝ 0,94-ից պակաս տեսակարար կշռով պոլիէթիլենից՝ տպագրված նկարով կամ տեքստով՝ գլանափաթեթներով	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն նույն ապրանքային դիրքի օգտագործվող նյութերի արժեքը, ինչպես և պատրաստի արտադրանքը չպետք է գերազանցեն վերջնական արտադրանքի գնի 50 %-ը

7. ԱՏԳ ԱԱ «4017 00» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4017 00 000	Կոշտ ռետին (օրինակ՝ էբոնիտ) բոլոր ձևերով, ներառած թափոնները և մնացորդները, կոշտ ռետինից պատրաստված արտադրատեսակներ	Պատրաստում կոշտ ռետինից

8. ԱՏԳ ԱԱ «6803 00» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6803 00 000-ից	Արտադրանք բնական կամ եռակալված թերթաքարից	Պատրաստում մշակված թերթաքարից

9. ԱՏԳ ԱԱ «8608 00» ծածկագրով տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8608 00 000	Ճանապարհային սարքավորումներ և հարմարանքներ երկաթուղային և շարժակառքերի գծերի համար՝ մեխանիկական (ներառյալ էլեկտրամեխանիկական) ազդանշանային սարքավորումներ և հարմարանքներ՝ անվտանգությունը ապահովող կամ շարժումը կառավարող երկաթուղային ճանապարհներին, շարժակառքի ուղիներին, ավտոմոբիլային ճանապարհներին, ներքին ջրային ուղիներին, կայանելու շինություններում, նավահանգիստներում և օդանավակայաններում, վերոնշյալ սարքավորումների և մեքենաների	Պատրաստում, որի ժամանակ օգտագործված բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի *50 %-ը: Վերը նշված սահմաններում նույն դիրքում դասակարգված նյութերը, ինչպես և արտադրանքը կարող են օգտագործվել միայն ապրանքի վերջնական գնի 5%-ի հանրագումարի չափով*

	մասեր	

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման պահից 60 օր հետո և ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից 30 օր անց:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահի ստանալու օրվանից 30 օր անց:

Կատարված է Յալթա քաղաքում 2012թ. սեպտեմբերի 28-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013 թ. մայիսի 1-ին:

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Ադրբեջանի Հանրապետության

2012 թվականի սեպտեմբերի 28-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը կից

Բացառությամբ Արձանագրության 2-րդ հոդվածի՝ «ժամանակավորապես կիրառվում է ստորագրման պահից 60 օր անց և» արտահայտության:

Ադրբեջանի Հանրապետության
վարչապետի առաջին տեղակալ **Յա. Էյուբով**

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Հայաստանի Հանրապետության

2009 թվականի նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը կից

Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի 2009 թ. նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրությունը մինչև սույն Արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Ուկրաինայի

2009 թվականի նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը կից

Բացառությամբ Արձանագրության ստորագրման օրվանից ժամանակավորապես կիրառման մասին 2-րդ հոդվածի:

Ուկրաինան իրեն իրավունք է վերապահում 2009 թ. նոյեմբերի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին համաձայնագրի նպատակների համար առաջնորդվել Ուկրաինայի ապրանքային ներպատական գործունեության անվանացանկով:

Ուկրաինայի վարչապետ **Ն. Ազարով**